ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ՝ Արա Բաբլոյանի, Մկրտիչ Մինասյանի, Կարեն Ավագյանի, Մխիթար Վարագյանի, Արմեն Մարտիրոսյանի, Ռուբիկ Հարությունյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք օրենքների նախագծերի փաթեթի հեղինակներին ոլորտում առկա խնդիրների առավել ամբողջական կարգավորման նպատակով համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ նախագծերի փաթեթի լրամշակման համար:

Հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-346-03.10.2008-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (24 դեկտեմբերի 2004 թվական, ՀՕ-72) 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված հիմնարկների եւ կազմակերպությունների ղեկավարները համապատասխան միջոցներ են ձեռնարկում բաց եւ (կամ) փակ տարածքներում ծխելու համար հատուկ հատկացված գոտիներ ստեղծելու ուղղությամբ: Տեսանելի վայրում ապահովում են ծխելու արգելքի մասին հայտարարություն»:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

Նախագիծ

Պ-346[1]-03.10.2008-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (1985 թվականի դեկտեմբերի 6, այսուհետ՝ Օրենսգիրք) 116-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 117-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետեւյալ խմբագրությամբ՝

«Օդանավակայանում ծխելը, բացառությամբ ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով:»

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել նոր 135[1] հոդվածով հետեւյալ խմբագրությամբ՝

«***Հոդված 135[1] Տրանսպորտում ծխելը***

Հասարակական ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային եւ էլեկտրական տրանսպորտում ծխելը, բացառությամբ ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով:

Նույն խախտման կատարումն այն անձի կողմից, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել երեք ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով»:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել նոր 173^2 եւ 173^3 հոդվածներով հետեւյալ խմբագրությամբ՝

«***Հոդված 173^2 . Ծխելն արգելող կանոնները խախտելը***

Կրթական, մշակույթային եւ առողջապահական հաստատություններում, ինչպես նաեւ հասարակական նշանակություն ունեցող վայրերում եւ հիմնարկների, կազմակերպությունների շենքերի տարածքներում ծխելը, բացառությամբ ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների `

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգապատիկի չափով:

Նույն արարքը այն անձի կողմից կատարելը, որը նշված խախտման համար վարչական տույժի է ենթարկվել երեք ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:

Հոդված 173^3 . Ծխախոտի օգտագործման սահմանափակումների ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը

Տեսանելի վայրում հիմնարկների, կազմակերպությունների կողմից ծխելու արգելքի վերաբերյալ հայտարարության բացակայությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Հիմնարկների, կազմակերպությունների կողմից ծխելու համար առանձնացված հատուկ տարածքների բացակայությունը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված արարքը այն անձի կողմից կատարելը, որը նշված խախտումների համար վարչական տույժի է ենթարկվել երեք ամսվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 3- րդ կետում «133» թվից հետո լրացնել «,135[1] » թիվը:

Հոդված 6. Օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «ինչպես նաեւ սույն օրենսգրքի 173[2] եւ 173[3] հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ հակահրդեհային կանոնների խախտման մասով:»:

Հոդված 7. Օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի «152-րդ հոդվածով» բառերը փոխարինել «152-րդ, 173[2] -173[3] -րդ հոդվածներով» բառերով:

Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

Նախագիծ
Պ-346[2]-03.10.2008-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (05 դեկտեմբերի 2006 թվական, ՀՕ-233) 18-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության մեջ հանել «ծխելը եւ» բառերը:

Հոդված 2. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ծխախոտի իրացման, սպառման եվ օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման անհրաժեշտության մասին:

Ինչպես աշխարհի շատ երկրներում, այնպես էլ ՀՀ-ում ծխախոտի օգտագործումը եւ դրա հետևանքով առաջացած հիվանդությունների ու մահացության դեպքերի բարձր գերակայությունը առողջապահական եւ տնտեսական լուրջ խնդիրներ են ստեղծում:

2004թ. հոկտեմբերի 12-ին ԱԺ-ն ՀՀ Նախագահի ներկայացմամբ վավերացրեց Առողջապահության համաշխարհային կազմակերպության ծխախոտի դեմ պայքարի մասին շրջանակային կոնվենցիան (ԾՊՇԿ) և Հայաստանը դարձավ ԱՊՀ անդամ-երկրներից առաջինը, որն իրականացրեց այս քայլը: ԾՊՇԿ-ի վավերացումը մեծապես խթանեց ծխախոտի դեմ պայքարի հետ կապված նոր օրենսդրության մշակումը: 2004թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Ծխախոտի իրացման, սպառման եվ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքը, իսկ 2005թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվեց ՀՀ-ում ծխախոտի դեմ պայքարի պետական ծրագիրը եւ ծխախոտի դեմ պայքարի բնագավառում առաջնահերթ միջոցառումների ցանկը: Չնայած էական առաջընթացին՝ դեռևս առկա են որոշ բացեր, որոնցից կարևորագույնների շարքում է ծխախոտի ծխից ազատ վայրերի հետ կապված հիմնախնդիրը: Թեև հասարակական վայրերում ծխելը կանոնակարգող օրենքն արդեն ընդունված է, սակայն դեռեւս գոյություն ունեն դրանց կիրառման հետ կապված որոշ խնդիրներ: Օրենսդրության գործնական և փաստացի իրականացումը պահանջում է այնպիսի համարժեք միջոցներ, ինչպիսիք են վերահսկողություն իրականացնող մարմինների արդյունավետ գործունեությունը, տուգանքների առկայությունը և կիրառումը, հասարակության իրազեկումը:

Այդ իսկ պատճառով «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նորմերի խախտման համար իրավական պատասխանատվության նախատեսման նպատակով անհրաժեշտ է լրացումներ կատարել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում»՝ սահմանելով տուգանքների չափերը: Բացի այդ առաջարկվում է «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարել կրթական, մշակույթային, առողջապահական հաստատություններում ծխախոտի օգտագործման սահմանափակումների նպատակով՝ բացառելով այդ հիմնարկների տարածքներում ծխելու համար առանձնացված գոտիների ստեղծումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Արմեն Մարտիրոսյանի և Ստյոպա Սաֆարյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. 5-րդ հոդվածով առաջարկվող 61-րդ հոդվածի 1-ին կետի նոր խմբագրությունը հիմնավորված չէ և ոչ մի առնչություն չունի նախագծի ընդունման հիմնավորումում նշված քվեարկության անցկացման կարգի թափանցիկության և հրապարակայնության ապահովման անհրաժեշտության հետ: Ընդ որում, քննարկումից ամիջապես հետո տվյալ նախագծի քվեարկություն անցկացնելու պրակտիկա չի գործում նաև Արևմտյան Եվրոպայի պառլամենտներում:

Միաժամանակ գտնում ենք, որ նախագծի քննարկումից ամիջապես հետո քվեարկություն կարող է անցկացվել միայն հիմնական զեկուցողի առաջարկությամբ:

2. Նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, առաջարկում ենք.

1) Նախագծի վերնագիրը գրել մեծատառերով, «լրացումներ» բառը փոխարինելով «ԼՐԱՑՈՒՄ» բառով:

2) 2-րդ և 3-րդ հոդվածներով կատարվող փոփոխությունները միավորել մեկ հոդվածում:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագիծի 5-րդ և 6-րդ հոդվածներին:

3) 3-րդ հոդվածում «6^1» թիվը փոխարինել «6.1» թվով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-349-10.10.2008-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի (20 փետրվարի 2002 թվականի, ՀՕ-308, այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածի 5-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Յուրաքանչյուր խմբակցություն՝ անկախ անդամների թվաքանակից, ունենում է Ազգային Ժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար եւ երեք փորձագետ:»:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2. Հանձնաժողովի կազմը պետք է արտահայտի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ դրանց կազմում չընդգրկված պատգամավորների թվական հարաբերակցությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ խմբակցության անդամների թիվը քիչ է 13-ից:»:

Հոդված 3. Օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ կետից հետո լրացնել «6^1 »-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ՝

«6^1 . Մինչեւ 13 անդամ ունեցող խմբակցությունն իրավունք ունի իր անդամին ներկայացնել մեկից ավելի մշտական հանձնաժողովների կազմում ընդգրկվելու համար:»:

Հոդված 4. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«գ) խմբակցության կամ իր անունից կարծիք հայտնել քվեարկության ընթացքում խախտումների մասին, այդ թվում նաեւ դահլիճում գտնվող պատգամավորների եւ լուսատախտակի վրա ցուցադրվող պատգամավորների թվաքանակի անհամապատասխանության վերաբերյալ, եւ պահանջել վերաքվեարկություն ու վերահաշվարկ՝ քվեարկության ընթացքում խախտումների մասին կարծիք հայտնած պատգամավոր(ներ)ի եւ/կամ նախագահողի եւ/կամ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամների մասնակցությամբ:»:

Հոդված 5. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Նիստը վարողը քվեարկություն է անցկացնում օրենքների նախագծերի կամ նախագծերի փաթեթների, Ազգային Ժողովի որոշումների նախագծերի եւ օրենքներով նախատեսված այլ հարցերի քննարկումը Ազգային Ժողովում ավարտելուց անմիջապես հետո, իսկ քվեարկությունից առաջ հայտարարում է քվեարկության դրվող բոլոր առաջարկությունները, ճշտում է դրանց ձեւակերպումները, իսկ սույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում հիշեցնում է նաեւ, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը:»:

Հոդված 6. Օրենքի 61-րդ հոդվածի 7-րդ կետում «նիստը վարողի» բառերը փոխարինել «պատգամավորի» բառերով:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Ազգային ժողովի պատգամավորների, խմբակցությունների եւ մշտական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման պայմանների բարելավմամբ, ինչպես նաեւ քվեարկության անցկացման կարգի թափանցիկությունը եւ հրապարակայնությունն ապահովելու անհրաժեշտությամբ: